ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N02/01.91/9334-18 "27" 12 2018 թ.

«ՄԱԴԷԼ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00907267) տնօրեն
տկն Մ. Գասպարյանին
Հասցե՝ ք. Երևան, Մ. Ավետիսյան 8ա, բն 18
Էլ. հասցե՝ madel2912@mail.ru

ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հուլիսի 22-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-18/39-5» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է մատակարարվեին պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված ապրանքը՝ 4 հատ սանթուր /Վարպետի աշխատանք/:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված էր 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:

2018 թվականի դեկտեմբերի 12–ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Ձեր կողմից ներկայացվել է Պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը, ինչպես նաև 2018 թվականի դեկտեմբերի 12-ին դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը:

Սակայն 2018 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ Ձեր կողմից չի տրամադրվել ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես նաև Պայմանագրով նախատեսված ապրանքը:

Ընդ որում՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատարին ուղղված քաղաքացի Սերգեյ Սադոևի գրությամբ տեղեկացվել է, որ իր կողմից պատրաստված թվով 4 սանթուրների համար չի վճարվել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից, չի վստահում Ձեր ընկերությանը, քանի որ չի պատրաստվում կրկին խաբնվել (2017 թվականին Աշոտ Ազիզյանի կողմից պատվիրված թվով 5 սանթուրների համար խոստացված գումարը չի ստացել) ու չի հանձնում գործիքները:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Պայմանագրի 2.4.3-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

Հիմք ընդունելով պայմանագրի 2.4 և 2.1.7 կետերի, ինչպես նաև 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 24-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 4800 (չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 6.3 կետի համաձայն (պայմանագրի 3.1 կետում նախատեսված պայմանագրի գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 13.06.2018 թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 և 1.4 կետերը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 96 000 (իննսունվեց հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):

27.12.2018

X

Подписано: MURADYAN SAMVEL 1104630109

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Ռ. Ասատրյան
Հեռ.՝ 011-58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am